

## Կաթի պակասութիւնները

Դառն կաթ. Շատ անգամ կովերի կաթը դառն համ է ունենում և այդ դառնութիւնը առում է երբեմն մի քանի օր կամ շաբաթներ: Ոմանք սորա պատճառը համարում են կենդանեաց կերի մի քանի տեսակները՝ գերիմաստը (ЛЮПИТЬ) շաներիցուկը (СОБАЧЬЯ РОМАШКА) և առհասարակ ճահճային տեղերի բոյսերը, որոնք իւրեանց մէջ պարունակում են դառն նիւթ և մարսողական գործարանի ու լեարգի խանգարմունքը. վերջին գէպըում լեարգից լեզին թափւում է արեան մէջ և այնտեղից անցնում կաթի մէջ: Ծերացած կովերն ևս երբեմն մի կամ մի քանի պատուկներից դառնաղի համ ունեցող կաթ են տալիս:

Բայց կաթի այս պակասութեան գլխաւոր պատճառը մի քանի տեսակ բակտերեաներ են, որոնց մի տեսակը նախ առաջացնում է ստինքի վարակիչ հիւանդութիւն, և ապա ընկնելով կաթի մէջ, մի տեսակ թթու է առաջացնում, փոխում է պանրածինը և կաթին դառն համ տալիս:

Կաթի այս պակասութեան դէմ կռիւ մղելու համար հարկաւոր է նախ և առաջ փոխել կովերի կերը և լաւը տալ, ամենայն օր աղբը վերցնելուց յետոյ՝ նոցա ախոռը պէտք է սրակել կարբօլա—թթւումով, ծծումբով ծուխ առլ, իսկ ստինքն երկու անգամ լուանալ նախ գոլ և ապա կարբօլաթթւում խառնած ջրով: Երեք օրից յետոյ կաթի և սերի դառն համը բոլորովին կանցնի և սերից կրկին կարելի կլինի պատրաստել հիանալի իւղ:

Կաթի դառնութեան առաջն առնել կարելի է նաև կովի ստինքը սօզի 20/0 տաք լուծուածքով և աղբահիւթը հոսելու համար պատրաստած խողովակները կրէօլինի 30/0 լուծուածքով լուանալով, իսկ պտուկների անցքերը հարկաւոր է ախտահանել 30/0 սսկերորակի թթւումի (СОРНАЯ КИСЛОТА) լուծուածք սրակելով: Պակասաւոր կաթը պէտք է բաժանել առողջից:

Թթուած կաթ. Կաթն օդի մէջ մնալով՝ սկսում է կրել դանազան խմորումներ (ДРОЖЖИ), մանաւանդ երբ տեղի տաքութիւնը բարձր, մօտաւորապէս 30° լինի: Կան մի քանի տեսակ խմորումներ, որոնք ընդունակ են անմիջապէս թթուեցնել կաթ-

Ծանօթ. Այս յօդուածը պատմ էր շարունակարար «Врач»-ի անցեալ տարուայ համարներում և ընդհատուկ Մայիս ամսուայ համարից: Այժմ տալիս ենք նորա շարունակութիւնն ու վերջը:

նաշաքարը, նրանից կազմել ածխաթթու (УГЛЕКИСЛОТА) և սպիրտ: Բացի այդ խմորումներից՝ կան նաև միջանի տեսակ զարգացման ստորին աստիճանի վերայ կանգնած սունկեր, որոնք նոյնպէս կարող են այդպիսի գործողութիւններ առաջացնել:

Ինչպէս որ կան շատ տեսակ սպիրտի խմորումներ, նոյնպէս և կան միմեանցից յատկութեամբ տարբեր շատ տեսակ կաթնային խմորումներ: Միջանիսը կաթնաշաքարը դարձնում են կաթնային թթուումի, ուրիշները՝ մըջնական, իւզային և ածյին թթուումներ և այլն: Այսպիսի խմորումները կաթի ստորահան խմորումներից բոլորովին տարբեր են լինում: Կաթի մէջ կաթնային խմորումը կարող է սկսուել 10—12<sup>0</sup> ջերմութեան մէջ և որքան աւելի լինի ջերմութիւնը, այնքան աւելի յաջող տեղի կունենայ այդ խմորումը և միայն 70—75<sup>0</sup> ջերմութեան մէջ դադար կառնի: այսպիսով ուրեմն եռացրած կաթը դժուարութեամբ կարող է թթուել, եթէ անմաքուր ամանի մէջ չէ դրուած և կամ խառնուած չէ հում կաթի հետ:

Եթէ կաթը թթուում է որևէ խմորման պատճառով, այդպիսին առանց կասկածելու կարելի է գործ ածել, միայն թէ նրանից չէ կարելի պանիր պատրաստել: Եթէ խմորման պատճառն ուրիշ տեսակ միկրոօրգանիզմներ են, այն ժամանակ պէտք է զգոյշ լինել, որովհետև նրանցից միջանիսը ստինքի բորբորման պատճառ դառնալով, թունաւոր ներգործութիւն են անում: այդպիսի կաթը պանրագործութեան համար անպէտք է համարուում:

Աւազախառն կար. Այսպիսի կաթը ստինքից արտադրուելիս՝ ստորաբար ցաւեր է պատճառում կենդանիներին, որովհետև ստինքում հաւաքուած՝ այսպէս կոչուած կարի Բարերից մանրերը կթելիս դուրս են գալիս: Պէտք է աշխատել ստինքից կթելու միջոցով հեռացնել այդ կաթի քարերը: Ըայց եթէ գորա այնքան մեծ են, որ անկարող են անցնել պտուկի անցքի միջով, այն ժամանակ հարկաւոր է պինցետով հեռացնել: Սակայն եթէ այս ևս չյաջողուի, մնում է ստինքը կտրել և այնտեղից դուրս հանել այդ քարերը: Եթէ կաթի դեղձն ամենալաւ գործունէութեան մէջ է, որ տեղի է ունենում սովորաբար կաթնատուութեան ժամանակամիջոցում, այս տեսակ անդամահատութիւն անվնաս կանցնի: Բայց որովհետև հէնց այդ դրութեան մէջ ամենից աւելի երկիւղ պէտք է կրել, որ չլինի թէ պտուկի անցքը կաթի քարերով փակուելով, ստինքի բորբորում առաջանայ և դրանով վնասուի ոչ միայն կովի կաթնատուութիւնը, այլ և նոյն իսկ նորա կեանքը, այս պատճառով

այդպիսի ժամանակ ստինքից անլնաս կերպով կաթ արտաշարելու միակ հաւաստի միջոցը պէտք է համարել կաթնահան գործիքի (МОЛОЧНЫЙ КАТЕТЕРЪ) գործադրութիւնը:

Այլի կարի պատճառը գլխաւորապէս այն սուսկերն են, որոնք ստինքի բարբորում են առաջացնում: Երբեմն պառու կուլերն ևս մի կամ մի քանի պառուկներից աղահամ կաթ են տալիս:

Մահացու սարափոխիկ հիւանդութիւններ առաջացնող կար. կաթն իւր մէջ կարող է պարունակել զանազան վնասակար վարակիչ հիւանդութիւնների սաղմեր: Այդ սաղմերը կարող են դանուել գեռ ստինքում եղած կաթի մէջ անասունների հիւանդութեան պատճառով. բայց աւելի յաճախ կաթն ընդունում է իւր մէջ այդպիսի սաղմեր շուրջն եղած ապակիանուած օդի միջից կամ անմաքուր ջրով լուացած սամաններից: Մահացու հիւանդութիւններ առաջացնող բացիլներից են՝ տուբերկուլեօզի (Թորքախտի, բարակացաւի), տիֆի և խօլերայի բացիլները:

Փորախտաւոր կուլերի կաթի մէջ սովորաբար լինում են տուբերկուլեօզի բացիլներ: Ներկայումս ընդունում են, որ այդ հիւանդութիւնը կենդանիներից կաթի միջոցով կարող է անցնել մարդկանց: Փորձերը ցոյց են տուել, որ այս բացիլները կարող են պահպանել իւրեանց կենսունակութիւնը թթու կաթի մէջ 10—40 օր: Իսկ պանրի մէջ 35 օր: Ինչ վերաբերում է բացիլի գոյութեանը իւրի մէջ, այդ մասին կարծիքները տարբերում են: Մինչ գեռ մի քանի կատարած փորձերը ցոյց են տուել, որ իւրն ևս ընդունակ է վարակուել այդ բացիլների սաղմերով, ուրիշներն իւրեանց փորձերով ընդհակառակն են ապացուցանում և ասում են, որ դժբա տուբերկուլեօզի բացիլներ չեն:

Տիֆի բացիլները կարող են պահպանել կաթի մէջ իւրեանց կենսունակութիւնը մինչև 25 օր. իւրի մէջ նոցա սաղմերը ոչնչանում են միայն 5—7 օր անցնելուց յետոյ:

Ինչ վերաբերում է խօլերայի բացիլներին, ոմանք կաթը այդպիսի բացիլների համար յարմար տեղ են համարում, միայն 12 ժամ անցնելուց յետոյ նոքա ոչնչանում են: Ուրիշներն ապացուցանում են, որ նոքա կաթի մէջ կարող են իւրեանց գոյութիւնը պահպանել 4—6 օր, իսկ իւրի և պանրի մէջ խօլերայի կենդանի սաղմերը ոչնչանում են: Ահա այս պատճառով կաթը խօլերայի ժամանակ չպէտք է այնքան էլ վտանգաւոր համարել և վախենալ գործածելուց:

Կաթի միջոցով կարող են փոխադրուել սկարլատինան, անա-

սուճնները դարազ (яшурь) կոչուած հիւանդութիւնը, որոնց վարակիչ սաղմը դեռ անյայտ է, նաև կատաղութիւնը, թանչքը (дисентерія), ծաղիկը, դեղնախտը և այլն: Սրբիւրախտի սաղմերը շատ լաւ աճում են թարմ կաթի մէջ և առաջին օրերում երբեք չեն կորցնում իւրեանց վարակիչ յատկութիւնը: Դիֆտերիաի բացիւններն եփած տաք կաթի մէջ շատ արագ են դարգանում, այնպէս, որ այս հիւանդութիւնն ևս կարող է կաթի միջոցով անցկենալ մարդկանց:

Թէպէտ սուճները մի կողմից շատ անգամ բոլորովին ձգում են կաթի արժէքը, սակայն միւս կողմից՝ նոքա շատ օդտակար են հանդիսանում կաթնատնտեսութեան համար: Մի կողմ թողնելով սերի մէջ կատարած թթուումների ազդեցութիւնը, երբ նրանից (թթուած սերից) պատրաստում են այսպէս անուանուած հմի կարագ, առանց այդ օրգանիզմների օգնութեան հաւանականաբար անհնարին կլինէր պանիր պատրաստելը. վերջապէս կաթից այնպիսի խմելիքներ պատրաստելը, ինչպիսին է կեֆիրը, որ գործ է ածւում թուլացած, տկարացած օրգանիզմներին սնուցանելու համար, մարդկութիւնը դարձեալ պարտական է այդ բուսական անտեսանելի էակների գործունէութեանը:

Տնային գործածութեան ժամանակ այս վտանգներից ազատ մնալու համար կաթը երբեք հում չպէտք է խմել, նախ եռացնել և ապա գործ ածել, թէև հում կաթն աւելի դիւրամարս է, քան եփածը, թէ որ նոր է կթուած և ազատ է հիւանդութիւններից և վերոյիշեալ սաղմերից:

Կաթի սառեցնելը, պաստրացումը, ստերլացումը եւ հակափոս նիւրերի գործադրութիւնը. Որպէս զի կաթը թէ անմիջական գործածութեան և թէ նորանից այլ և այլ նիւթեր պատրաստելու համար շահաւէտ լինի, կարևոր է ամենից առաջ արդէլել նորա մակարդուիլը, թթուիլը՝ դանդաղեցնելով սուճիկերի աճեցումը կամ բոլորովին ջնջելով նոցա կաթի միջից, բացի այն դէպքերից, երբ սուճիկերի, այդ մանրիկ էակների գոյութիւնն անհրաժեշտ է նոցանից մի քանի տեսակ արդիւնքներ ստանալու համար: Բայց բաւական չէ միայն կաթի և սերի մէջ վաղաժամ թթուութիւն առաջացնող սուճիկերի առաջն առնելը, որոնք այսպէս թէ այնպէս ձգում են կաթի արժէքը. կարևոր է մարդուս վնասակար, վտանգաւոր հիւանդութիւններ յառաջացնող բակտերիաները ոչնչացնել:

Որպէս զի կաթը երկար ժամանակ անփոփոխ մնայ, գըլ-

խաւորապէս թթուելուց ազատ լինի, որպէս զի հնար լինի բոլորովին ոչնչացնել կամ դանդաղացնել սունկերի զարգացումը, անհրաժեշտ է ձեռք առնել հետեւեալ միջոցները.

1. Կաթը սառեցնել,

2. > տաքացնել,

3. Կաթի հետ զանազան հակափուտ նիւթեր խառնել:

Կաթ սառեցնելը. Կթելուց անմիջապէս յետոյ շատ հեշտ կերպով կարելի է կաթը սառեցնել, որով կդանդաղի թթուելը և մակարդուիլը, որովհետև որչափ աւելի սառը լինի կաթը, այնչափ աւելի ուշ կգոյանան նորա մէջ սունկեր: Մանաւանդ սառեցնելն շատակար է ճանաչուած այն դէպքում, երբ հարկաւոր է կաթը տաք եղանակին (ամառը) փոխադրել հեռու տեղ: Ինչ էլ որ լինի, այնու ամենայնիւ կարևոր է որ կթելուց անմիջապէս յետոյ տեղի ունենայ սառեցնելը: Սառեցնելու համար կարելի է ամանով կաթը ջրի մէջ դնել: Բայց եթէ կաթը շատ է, որպէս զի աւելի լաւ սառչի, հարկաւոր է գործ դնել սառեցնող գործիք կամ սառնարան, որի մէջ կաթը սառչում է այն պատճառով, որ հոսում է վերեւից ներքև պղնձեայ խողովակների արտաքին մակերևոյթի վերայով, մինչդեռ ջուրը հոսում է այդ խողովակների միջով հակառակ ուղղութեամբ: Գործածութեան մէջ կայ երկու տեսակ սառեցնող գործիք. 1. առերեսի և նորա ձևով պատրաստած շատ ուրիշները և գլանաձև գործիքներ, ինչպէս օրինակ Բադենում պատրաստած Նմիտզի և Բրետալինի գործիքները: Սառնարաններն իւրեանց բոլոր պարագաներով արժեն 22—125 ա, նայած իւրեանց սառեցրած կաթի քանակութեանը. իւրաքանչիւր ժամում կարելի է սառեցնել 100—2000 լիտր կաթ:

Կաթի սառնութեան աստիճանը կախումն ունի սառեցնելու համար գործածուող ջրի քանակութիւնից և նորա բարեխառնութիւնից: Եթէ 36<sup>0</sup> ջերմութիւն ունեցող կաթը 3<sup>5</sup>/<sub>4</sub><sup>0</sup> ջերմութիւն ունեցող ջրով սառչելով իջել է 10<sup>0</sup>-ի, այն ժամանակ սառեցնելու համար ջրի քանակութիւնը 2 անգամ աւելի պէտք է լինի ընտրած կաթի քանակութիւնից: Եթէ նոյնպիսի ջրով կաթը սառել է մինչև 17<sup>0</sup>, կարիք կլինի կաթի քանակութիւնից 1,24 անգամ աւելի ջուր: Կաթ սառեցնելու համար կարելի է գործածել ջրհորի կամ աղբււրի ջուր. սակայն եթէ սառը ջուր չլինի, պէտք է աւազանի մէջ լցնել սառուց ու այնպէս գործածել:

Բայց որովհետև ամեն մի սուն անկարող է սառնարան կամ յատկապէս այդ նպատակով պատրաստած սառեցնող պա-

հարան ունենալ, մենք առաջարկում ենք կաթ պահելու համար մի չափազանց հասարակ եղանակ, ամանով կաթը պէտք է բաւականաչափ ցած բարեխառնութեան մէջ պահել, որով մի կողմից կաթը թթուեցնելու առաջն առած կլինենք, իսկ միւս կողմից ստիպուած չենք լինի բաւական թանգ դնով ծախուող սառեցնող պահարան դնելու: Այդ նպատակով հարկաւոր է վերցնել մի ասպիեայ աման (յուրան, բանկայ, սափոր), լցնել նորա մէջ կաթ, ծածկել համաչափ ծածկոցով և դնել մի լայն, մինչև կէսը սառը ջրով լցրած թասի մէջ: Յետոյ կաթով ամանը պէտք է ծածկել թաց քաթանով կամ անձեռոցիկով, միայն կարևոր է հետևել, որ դոցա ծայրերն անպատճառ ջրի մէջ լինեն: Ահա այս է կաթ պահելու ամբողջ գործը: Աւելացնենք նաև այն, որ այսպէս թէ այնպէս կաթի շուտափոյթ թթուելուն նպաստող արեգակի ճառագայթների մնասակար ազդեցութիւնից ազատ կացուցանելու համար, անհրաժեշտ է ջրով թասի մէջ դրած կաթով լի ամանը դնել մի մութ տեղ, միայն այնպէս, որ այդ տեղը խոնաւ չլինի և օդը մաքուր լինի:

Կաթի սառնութեան համար 150 II. բարեխառնութիւնը պէտք է ամենաբարձրը համարել, որովհետև այդ աստիճանից սկսած ջերմութեան աստիճանաբար աւելանալովը կաթնային թթուութի բակտերիաները կսկսեն աճել և բազմանալ: Հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս, թէ որքան կարևոր է կաթը դնել մինչև 150 ջերմութեան մէջ պահելը:

390 ջերմութեան մէջ կաթը մահարդուում է 19 ժամ անցնելուց յետոյ.

250	»	»	»	29	»	»
200	»	»	»	48	»	»
174 <sup>1</sup> / <sub>2</sub> 0	»	»	»	63	»	»
150	»	»	»	88	»	»
100	»	»	»	99	»	»
20	»	»	»	14 օր	»	»

Տաքացրած կաթն ևս որոշ ջերմութեան մէջ ազատուում է սաղմերից: Այս փորձն առաջին անգամ արել է 1810 թ. մի գիտնական. նորան յաջողուեց ջերմութեան ազդեցութեամբ կաթը մի քանի ամիս իւր ընտանի վիճակի մէջ պահել՝ ամեն օր թեթև կերպով եռացնելով:

Յայտնի է, որ կաթի մէջ եղած սաղմերը չեն կարող դուրսիւն ունենալ 0—120 ջերմութեան մէջ և միայն 120-ից սկսած մինչև 300 ջերմութեան մէջ կսկսեն աճել, բազմանալ: 300 բարձր հետզհետէ կսկսեն պակասել այդ սաղմերը և որոշ աստիճանի ջերմութեան մէջ արդէն բոլորովին կոչնչանան:

Պէտք է աչքի առաջ ունենալ և այն, որ բարձր ջերմութեան ազդեցութեան տակ (սկսած 700-ից) կաթի համը և կազմութիւնը փոխուում է և այդ աւելի զգալի է լինում այն ժամանակ, երբ բացի ջերմութեան սաստկութիւնից՝ կաթը երկար ժամանակ ենթակայ է լինում այդ ջերմութեան: Ահա այս պատճառով, որպէս զի կաթը կարողանայ իւր սկզբնական յատկութիւնն ու համը պահպանել, չպէտք է 700 աւելի բարձր ջերմութեան ենթարկել:

Ջերմութեան ազդեցութեամբ կաթը երկար ժամանակ անփնաս պահելու համար կայ երկու եղանակ. պաստրացումն և ստերիլացումն:

Պաստրացումն (pasteurization). Պաստրացման ժամանակ գործ են դնում 1000 ից ցած, աւելի որոշ ասած 700 ջերմութիւն և որովհետև այս դիւարը Պաստերիւն է, այդ պատճառով կոչուում է պաստրացումն: Ինչպէս տեսանք այդպիսի ջերմութեան մէջ ոչնչանում են կաթնային թթուաներ առաջացնող բակտերիաների մի մասը և վարակիչ հիւանդութիւններ առաջացնող սաղմերը և մնացածներն էլ ակարանում են: Այդ սաղմերը ոչնչանում են՝

30 բոպէում	700 ջերմութեան մէջ.
15 »	850 » «
5 »	1000 » «

Տուբերկուլեօզի (թորախտի) բացիւները ոչնչանում են՝

10 բոպէում	700 ջերմութեան մէջ
5 »	900 » «
2 »	900 » «
1 »	950 » «

Վայրիկենապէս 1000 » «

Այսպիսով ուրեմն պաստրացման եղանակով պատրաստած կաթը ազատ է լինում վարակիչ հիւանդութիւններ առաջացնող սաղմերից, մանաւանդ տուբերկուլեօզից. այդ միջոցով դանդաղում է նաև կաթի թթուիլը և մակարդուիլը, որովհետև ոչնչանում են դոցա առաջացնող բակտերիաները: Սորա մէկ օգուտն էլ այն է, որ կաթի կազմութիւնն և համը չի փոխուում, իսկ այդ կարևոր երևոյթ է, երբ կաթը գործ են ածում հիւանդներին և երեխաներին համար: Ներկայումս շատ տեղերում հորթերին սնուցանում են այսպիսի կաթով, որով անասունները ազատ են լինում այն հիւանդութիւններից, որ նորա ստանում են կաթից (առաւելապէս տուբերկուլեօզ): Քայց եթէ պաստրացման ենթակայ եղած կաթը ազատ, ան-

մտաշելի չէ օգի ազդեցութիւնից և եթէ նա սաղմերից ազատ  
ամբափակ ամաններէ մէջ չէ, այն ժամանակ բահաբեռաները  
նորից առաջ կդան և կթթուեցնեն կաթը, թէպէտ քիչ ուշ:  
Սնմիջապէս պատարացումից, այսինքն 700 տաքացնելուց յետոյ  
եթէ կաթը ստուեցնենք մինչև 100, շատ լաւ կաթ կտայուի:

Ստերիլացումն (стерилизация). Պատահօրը ցոյց առնել, որ  
կաթը մինչև 1000 տաքացնելով չէ կոչնում իւր մէջ եղած բու-  
յոր սաղմերը: Նորան սաղմերից բոլորովին ազատելու, ստեր-  
լացնելու համար հարկաւոր է տաքացնել մինչև 1200, բայց  
այդպիսով կաթի յատկութիւնը կփոխուի և նոյն իսկ այրածի  
համ կտանայ, այդ պատճառով ստերիլացումը շատ օգտակար  
չէ համարուում:

Ստերիլացումը լինում է մամանաւոր և կտատրեալ: Առաջին  
տեսակի ստերիլացման ժամանակ կաթը տաքացնում են  $5/4$ —1  
ժամ մինչև 100—103<sup>0</sup> հասող շագու ազդեցութեամբ: Այս  
դէպքում յաջողութիւնը նոյնն է, ինչ որ պատարացման  
ժամանակ, ոչնչանում են միայն որոշ սաղմեր: Այսպիսի  
մամանաւոր ստերիլացումը գործադրում է երեխաներին իրեն  
անունը ծառայող վաճառուելիք կաթի համար, որովհետև այս  
դէպքում տաքացնելը այն նպատակով է տեղի ունենում,  
որ վտանգաւոր հիւանդութիւններ առաջացնող սաղմերի ոչնչ-  
ւացումը աւելի կարճ ժամանակամիջոցում է կտատրուում (10  
րոպէում), քան պատարացման ժամանակ: Այս կերպ մշակե-  
լով միայն այն դէպքում կտայուի սաղմերից ազատ կաթ,  
երբ կաթը շատ մարուր է կթուած եղել:

Կտատրեալ ստերիլացումն, այն է կաթի մէջ եղած բոլոր  
բահաբեռաների ոչնչացումը կարող է տեղի ունենալ երեք կերպ.  
առաջին՝ կաթը 6-7 ժամ եռացնելով. երկրորդ՝ չափազանց  
շատ տաքացրած գոլորշու ներգործութեամբ, որի ժամանակա-  
միջոցն այնքան աւելի կարճ էլինում, որքան ճնշումը սաստիկ է  
լինում (130<sup>0</sup>— $1/2$  ժամ, 120<sup>0</sup>—2 ժամ, 102—103<sup>0</sup>— $3/2$ —4 ժամ)  
և երրորդ՝ ընդհատ ընդհատ տեղի ունեցող ստերիլացումով. այս  
դէպքում կաթը նախ պէտք է տաքացնել մի քանի րոպէ 100<sup>0</sup>,  
յետոյ մի բարեխառն տեղում (40<sup>0</sup>) 12—24 ժամ հանդիսա-  
թողնել, աւր օդ չէ կարող մուտ գործել, կրկին տաքացնել մի  
քանի րոպէ մինչև 100<sup>0</sup>, որից յետոյ հարկաւոր է կրկին թողնել  
այնպէս, ինչպէս վերևում ասուեց: Այս գործողութիւնը պէտք  
է կրկնել 5—6 անգամ: Ինչ ազդեցութիւն որ ունենում է 100<sup>0</sup>  
ջերմութիւնը մի քանի րոպէում, նոյնպիսի ազդեցութիւն է  
ունենում 70<sup>0</sup> ջերմութիւնը 30 րոպէում: Այս կզանալով կաթը

ստերջացնելիս հարկաւոր է ամէն անգամ այդպիսի ընդմիջումների ժամանակ կաթը թողնել 200-ից բարձր ջերմութեան մէջ, որպէս զի չոչնչացած սաղմերը կարողանան առաջ գալ, աճել, որ յետոյ հեշտ լինի նոցա ոչնչացնելը:

Ստերջացման առաջին երկու եղանակներն այնքան էլ նպատակաշարժար չեն, որովհետեւ այսպիսի ժամանակ ինչպէս արտաքին, նոյնպէս և ներքին փոփոխութիւնը շատ զգալի է լինում. կաթը մութ կինամոնազոյն է դառնում և անհամոյ համ ստանում: Երրորդ եղանակն իհարկէ աւելի նպատակաշարժար է, բայց այն ատիճան դժուարին և թանգ, որ սովորական պայմաններում դժուար է գործադրել. միայն այն դէպքում, երբ կաթի գինը բաւական թանգ է լինում և երբ կարեւոր է սաղմերից բոլորովին ազատ կաթ ստանալ, կարելի է գործադրել այս եղանակը:

Սաածներեցս պարզ երևում է, որ կաթը սաղմերից բոլորովին ազատ կացուցանելն այնքան էլ հեշտ չէ և շատ դէպքերում բաւական կհամարուի, եթէ հիւանդութիւններ առաջացնող սաղմերը միայն յաջողուի ոչնչացնել: Համեմատաբար սակաւ և հեշտ ոչնչացող սաղմեր պարունակող կաթ ստանալու համար ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել, որ կովից ստացուած կաթը մինչև մշակելը մաքուր լինի:

Կաթի պատտորացման և ստերջացման համար գործածուելիք գործիքները երկու տեսակ են լինում. առաջին տեսակի գործիքների մէջ կաթը տաքացնում են 1000-ից ոչ բարձր, վերջինների մէջ 1000-ից բարձր: Եւրաքանչիւրը դոցանից նոյնպէս բաժանւում է երկու կարգի. մի քանիսի կաղմութիւնը նման է սառնարանների կաղմութեան, կաթը հոսում է խողովակների դրսի կողմից, իսկ ներսից հոսում է գոլորշին. միւսների կաղմութիւնն այնպէս է, որ նոցա մէջ լցրած կաթը դրսի կողմից գոլորշիով տաքանում է. կաթը մշտապէս շարժման մէջ է կամ առանձին խառնիչի միջոցով և կամ հէնց գործիքի պտտելովը:

Ստերջացման համար շատ գործիքներ և եղանակներ կան. հետաքրքրութեան համար առաջ ենք բերում այստեղ Սօկրս-Չէաի ստերջացման եղանակը: Կաթը պէտք է ոչ բոլորովին լիքը լցնել խորով կամ ծղօտէ գործուածքով պատած փոքրիկ շշերի մէջ, որոնց վերևի կողմը քիչ դատարկ տեղ է մնում օդով լցուած. ամանների բերանը խէժից պատրաստած և մէջտեղը ծակ լցանով փակուում է: Ս.յդ շշերը պէտք է դնել խուփ ունեցող մի կոնքի մէջ, որը պէտք է լցնել ջրով մինչև շշերի պարանոցի սիկզբը և ասպա փակելով խուփը, ջուրը տաքացնել մինչև եռացման սա-

տիճանի ու թողնել օ վայրկեան, որպէս զի կաթի մէջ լուծուած օդը գուրս գայ խցանի անցքից. որանից յետոյ խցաններէ անցքը հարկաւոր է փակել մի կտոր կոնաձև ապակիով, իսկ կանքը խուփով և ապա նորից տաքացնել ջուրը եռացման ստիճանից քիչ սրահաս: Այս բոլորից յետոյ հանում են շշերը և թողնում սառչելու: Այս կերպ պատրաստած կաթը կարող է պահուել մինչև մի ամիս:

Տաքացնելու համար ընտրած կաթը պէտք է կատարելապէս թարմ լինի, որովհետև ամենաաննշան թթւութիւնն անգամ բաւական է, որ տաքացնելուն պէս կաթը մակարդուի, որից յետոյ գործիքը անկարող կլինի կանոնաւորապէս գործել: Չպէտք է տաքացնել այն կաթը, որն արդէն ինկուբացիօնի շրջանը (վարակումն սկսուելուց մինչև հիւանդութեան յայտնուելու ժամանակամիջոցը) անցել է:

Ստերիլացրած կաթն օգտակար է գործածել առաջին երկու երեք օրուայ մէջ, մանաւանդ եթէ նորածին երեխայոց համար է գործածոււմ, որովհետև այդպիսի կաթն աւելի ժամանակ անցնելուց յետոյ անմարտողական է դառնում:

Հակափոս նիւթեր. կաթը թթուելուց երկար ժամանակ ազատ մնալու համար երբեմն նորա հետ խառնում են միքանի յայանի նիւթեր. սուկերորակի թթւոււտ (борная кислота). կամ ոսերորակ (буря). իւրաքանչիւր լիտր կաթի հետ խառնում են 0,5 գր.: Գործ են ածում նաև ուռլտական թթւոււտ՝ (салициловая кислота), իւրաքանչիւր լիտր համար 0,2—0,3 գր.: Կաթի թթւութիւնն երբեմն աշխատում են ծածկել՝ խառնելով իւրաքանչիւր լիտր կաթի հետ մի մի գրան սօդա կամ երկընածխական սօդա (двууглекислая сода): Նոր փորձերը ցոյց են տուել, որ եթէ այս կերպ վարուելով մարդս իւր նպատակին հասնի, այնուամենայնիւ չպէտք է երբէք յիշեալ նիւթերը գործածէ, որովհետև ժամանակի ընթացքում այդպիսի կաթը կարող է նոյն իսկ վնասակար ներգործութիւն ունենալ մարդու կազմուածքի, մանաւանդ ստամոքսի և աղիքների վերայ: Ահա այս պատճառով պէտք է արդելել թէ այս և թէ ուրիշ հակափուտ նիւթերի գործածութիւնը:

### Կաթի քրուքիւնը և նորա հետազօտելն ու խարդախելը.

Կաթնատնտեսութեան մէջ շատ կարևոր է իմանալ կաթի արժէքը, որ կախումն ունի նորա մէջ եղած ճարպի քանակութիւնից, խարդախած կամ անխարդախ լինելուց և մէջն եղած

հաստատուն նիւթերի քանակութիւնն: Կարևոր է իմանալ նաև կաթի տեսակարար կշիւը: Այդ նպատակով առաջ ենք բերում այստեղ համառօտակի այն գործադրուող հեշտ միջոցները, որոնցով կարելի կլինի մօտաւորապէս իմանալ կաթի պարօթեան չափը և ապա նորա տեսակարար կշիւը: Այս միջոցները բաւական են իմանալու համար, թէ արդեօք կաթը բնական վիճակի մէջ է, թէ խորզախած է, երեսից սերը քաշած, վերցրած է, կամ թէ արդեօք ջուր չէ աւելացրած: Այն նպատակին հասնելու համար կարևոր է կաթը հետազօտութեան ենթարկել: Բայց նախքան այդ անելը, որպէս զի արդիւնաւոր հետեանքների հասնենք, անհրաժեշտ է, որ հետազօտելի կաթը լաւ խառնուի և նորա տաքութեան աստիճանն իջնի մինչև 15: Կաթը ուղղահայեաց գրութեամբ պէտք է խառնել և եթէ շատ չէ, կարելի է խառնել փայտեայ գդալով, շատ եղած դէպքում շերտիով: Սառնելու նպատակն այն է, որ խիտ կարևոր նշանակութիւն ունեցող կաթի ճարպային գնդակիկները, որոնք միշտ ձգուում են բարձրանալ կաթի երեսը, համահաւասար կերպով տարածուեն կաթի մէջ:

Պատահում է երբեմն, որ իբրև փորձ վերցրած կաթի բաղադրութիւնը, մանաւանդ ճարպի քանակութիւնը, զգալի կերպով տարբեր է անարատ կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնից. դա փորձի համար վերցնելուց առաջ կաթը լաւ չխառնելու հետեանք է:

Եթէ հարկաւոր է համարուում փորձի համար վերցուելիք կաթը դանազան ամաններից առնել, այդպիսի դէպքում աւելի լաւ կլինի բոլորը լցնել մի ամանի մէջ, որով աւելի ճիշտ կերպով կարելի կլինի միջին յարգը (որոճ) իմանալ. եթէ այս նախազուշութիւնը չպահպանուի, մնում է, որ իւրաքանչիւր ամանից փորձի համար վերցրած կաթը առանձին բնուի և դուրս բերուի նոցա բաղադրութիւնը. միայն այսպիսի դէպքում ուշադրութեան պէտք է առնել նաև իւրաքանչիւր ամանի մէջ եղած կաթի քանակը. իւրաքանչիւր ամանից իբրև օրինակ վերցրած կաթը պէտք է յարաբերական լինի նորանում եղած կաթի քանակութեանը. այսպէս օրինակ, կարելի է իւրաքանչիւր 100 լիտր կաթից վերցնել  $1\frac{1}{2}$  կամ  $\frac{1}{4}$  լիտր և ապա բոլոր վերցրածները խառնել ու ստացուածը ենթարկել հետազօտութեան:

Եթէ կաթի երեսն արդէն սեր է բռնել, այն ժամանակ սերն ամբողջ կաթի մէջ տարածելու կամ խառնելու համար հարկաւոր է միջոցներ ձեռք առնել: Սորա համար անհրաժեշտ

է կաթը 30—40<sup>0</sup> տաքացնել և խառնելով սառեցնել մինչև 15<sup>0</sup>, որով սերի մէջ հաւաքուած ճարպը հաբող է հաւասարապէս տարածուել կաթի մէջ:

Կաթ հետազօտելը, նորա միջի ճարպի քանակը որոշելը պէտք է շատ շուտ կատարուի և կամ թէ չէ կաթը պէտք է պահել սառն օդի մէջ (10<sup>0</sup>-ից ցած), հակառակ դէպքում նորա մէջ չոր նիւթերը կաթնային թթւուտի պատճառով կպակասեն: Փորձերը ցոյց են տուել, որ 10—15<sup>0</sup> ջերմութեան մէջ 48 ժամ անցնելուց յետոյ պակասել է՝ 0,30/0, 19—21<sup>0</sup> ջերմութեան մէջ՝ 0,780/0, 96 ժամ անցնելուց յետոյ՝ 1—1,92<sup>0</sup>/0:

Քննել կաթի արժէքը, նշանակում է իմանալ գլխաւորապէս նորա մէջ եղած ճարպի քանակը: Ներկայումս կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշելու շատ միջոցներ կան: Թէպէտ այդ միջոցներից համարեա և ոչ մէկը բոլորովին ճշտութեան սահմանին չի մօտենում, բայց նոցանից մի քանիսը յարմարութեան պատճառով խիստ ընդարձակ գործադրութիւն են ստացել կաթնատնտեսութեան մէջ: Գործադրուող միջոցները չորս խմբի կարելի է բաժանել. ա. սերի քանակութիւն չափելը, բ. փորձի ենթարկուող կաթի անթափանցիկութեան աստիճան որոշելը, գ. փորձի համար իւղ հարելը, դ. մի քանի քիմիական նիւթերի միջոցով, երբեմն և կենդրոնակոյտ գորութեամբ ճարպ հանելը:

Ա. Կաթի մէջ սերի քանակութիւնը չափելու համար շատերը գործ են դնում Շելլալէի սերաչափ (кремометръ или сливкометръ) գործիքը, որովհետեւ եղածների մէջ ամենից պարզն է և յարմարը: Այս գործիքի միջոցով կարելի է որոշել 24 ժամուայ ընթացքում զով և հանդարտ մնացած և 12—15<sup>0</sup> Բ. ջերմութիւն ունեցող կաթի սերի քանակութիւնը: Այդ գործիքը բաղկացած է 20 սանտ. բարձրութիւն և 4 սանտ. տրամագիծ ունեցող ապակեայ մի գլանից, ոչ բաժանուած է աստիճանների. 15 սանտ. բարձրութեան վերայ նշանակած է 0 աստիճանը, որը հեռոյհեռէ բարձրանալով հասնում է մինչև 10<sup>0</sup>-ի: Սերաչափի մէջ կաթը պէտք է լցուի մինչև 6 աստիճանը և ինչպէս վերևն էլ յիշեցինք, 24 ժամ շարունակ պէտք է թողնել հանգիստ մի զով ակզ. այդ ժամանակուայ ընթացքում սերը՝ բաժանուելով կաթից՝ նստում է նորա երեսը բաւական որոշ և նկատելի շերտով: Այսպիսով որոշած կլինենք թէ սերի քանակը, թէ կաթի հեռ ջուր խառնած լինել կամ չլինելը և թէ երեսից սերը քաշած է թէ ոչ: Այդ ժամանակ անցնելուց յետոյ պէտք է նայել, թէ սերը քանի՞ փոքրիկ բաժանմունքներ՝ այսինքն

աստիճան տեղ է բռնել. հէնց այդ բաժանմունքների թիւը ցոյց է տալիս, թէ կաթի մէջ հարիւրից որ մասն է սեր: Այսպիսի գէպքում որպէս զի սերի ստորին շերտերն ևս, որոնք այսպէս թէ այնպէս պարզ նկատելի չեն, որոշ լինին, վերջերք կաթի մէջ մի քանի կաթիլ անլիթի կապոյց գոյն կամ լեղակի կարմիր գոյն պէտք է լցնել, որով սերը կպահպանէ իւր նախկին գոյնը, իսկ երեսը քաշած կաթը կնեղուի:

Բայց սերաչափ գործիքով չեն կարող ճիշտ կերպով իմանալ կաթի պարարտութեան չափը, որովհետեւ թէպէտ սերի շերտի ծաւալը զուգընթացաբար մեծանում է կաթի մէջ եղած ճարպի քանակութեամբ, այսինքն որքան շատ ճարպատ լինի կաթը, այնքան աւելի սեր կտայ, բայց ընդհանրապէս սերի քանակութիւնը ուղիղ յարաբերական չէ կաթի մէջ եղած ճարպի քանակութեանը: Բացի այն բանից, որ շատ դժուար է պահպանել կաթը միևնոյն բարեխառնութեան մէջ, որ նոյնպէս ազդում է սերի շերտի բարձրութեան վերայ, (տաք տեղ դրած սերաչափից աւելի քիչ սեր կստացուի, քան ցուրտ), այստեղ կարևոր է ուշադրութեան առնել նաև կաթի յատկութիւնը, նորա թանձրութեան աստիճանը և ճարպային գնտակիկների մեծութիւնը: Որքան թելաձիգ լինի պանրածինը և որքան մանր ճարպային գնտակիկները, վերջիններս այնքան աւելի գանգաղ կը արձրանան կաթի երեսը և այնքան աւելի պակաս թուով կընկնեն նորա սերի մէջ 24 ժամուայ ընթացքում: Միևնոյն կաթից վերցրած երկու օրինակները, որոնք միևնոյն քանակութեամբ ճարպ են պարունակում, կարող են բոլորովին տարբեր քանակութեամբ սեր պարունակել:

Կաթի սերի և նորա մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշ յարաբերութեան մէջ զնելու համար կատարուած փորձերը բոլորովին անյաջող են անցել և հիմա կաթի սերը չափելու համար գործ են ածւում առանձին գործիքներ (ЛАКТОКРИТЪ), որոնք կենդանախոյս զօրութեամբ են գործում և որոնցով կարճ ժամանակուայ ընթացքում կարելի է իմանալ զանազան տեսակ կաթերի սերի քանակը, թէպէտ սորա ևս ունին լուրեանց թերութիւնները:

Բ. Կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշելու մի միջոց է համարւում նաև կաթի անբափանցիկութեան աստիճանը: Առաջ կարծում էին, թէ կաթի անթափանցիկութեան միակ պատճառը նրանում եղած ճարպն է (չոյսի ճառագայթներն անդրադառնում են ճարպային գնտակիկներից), հետևապէս և անթափանցիկութեան աստիճանը ճիշտ յարաբերական է ճարպի

քանակութեան հետ. այսպէս օրինակ, որպէս զի կաթը մի որոշ աստիճան թափանցիութիւն ունենայ, որպէս զի նորա մի որոշ շերտից կարելի լինի տեսնել մի յայտնի սև գիծ և այլն, պարարտ կաթի հետ աւելի ջուր պէտք է խառնել, քան ոչ պարարտ: այսինքն ճարպային գնտակիկներով աղքատ կաթի հետ: Բայց այս հայեացքը ճիշտ չէ երկու տեսակէտից:

Առաջին, որ կաթի անթափանցիութիւնը կախումն ունի ոչ միայն որոշ քանակութեամբ կաթի մէջ եղած ճարպային գնտակիկներից, այլ և նոցա մեծութիւնից. որքան մանր լինեն ճարպային գնտակիկները և, հետևապէս, որքան շատ լինեն նոքա, այնքան աւելի սաստիկ կլինի լոյսի անդրադառնալը և նոյնքան աւելի պակաս թափանցիկ կլինի կաթը: Եթէ վերցնենք միևնոյն քանակութեամբ ճարպ պարունակող երկու տեսակ կաթ, ճարպային մանր գնտակիկներ պարունակողն աւելի սակաւ թափանցիութիւն է ունենում և այդպիսի կաթն աւելի պարարտ է համարւում, քան այն կաթը, որի մէջ սակաւ, թէպէտ խոշոր ճարպային գնտակիկներ կան: Եւ որովհետև տարբեր տեսակի կաթեր տարբեր մեծութեամբ ճարպային գնտակիկներ են պարունակում, պարզ է ուրեմն, որ թափանցիութեան աստիճանով կաթի ճարպի քանակութիւն որոշելն այնքան էլ յուսալի հետևանքներ չի ունենում:

Երկրորդ. կաթի թափանցիութեան պատճառը ոչ միայն նորա մէջ եղած ճարպն է, այլ և պանրածինը և հանքային նութերի մասնիկները:

Գ. Որև է կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշելու համար մարդիկ փորձեցին հարել նայն կաթից իբրև օրինակ վերցրածը: Այս միջոցը սկզբներում խիստ ընդարձակ գործունէութիւն է ունեցել Նահօբսենի գործիքով. այդ գործիքի մէջ միաժամանակ և միևնոյն պայմաններում կարելի է կարագ հարել վեց տեսակ կաթից: Այս կերպ ստացուած կարագը կշռում են և իմանում ճարպի չափը: Բայց որովհետև կարագի քանակն ամեն ժամանակ համապատասխան չի լինում ճարպի որոշ քանակութեանը, ինչպէս այդ ցոյց են տալիս փորձերը. շատ պարարտ կաթը որոշ հանդամանքներում կարող է տալ աւելի պակաս կարագ, քան քիչ պարարտ կաթը, այդ պատճառով այսպիսի միջոցներով երբէք ճիշտ եղրակացութիւնների չի կարելի հասնել, մանաւանդ որ այս նպատակով գործածուող գործիքը շատ հոգացողութիւն և խնամք է պահանջում, նպատակայարմար չէ և բաւական թանկ է, մօտաւորապէս 100 մարկ արժէ:

Գ. Կաթի մէջ եղած ճարպի քանակը որոշելու միջոցներէց շորթոչը (ճարպը քիմիական նիւթերի օգնութեամբ բաժանել) աւելի մեծ նշանակութիւն ունի և աւելի շատ է տարածուած: Սորա առաւելութիւնն այն է, որ նոյն իսկ վերլուծութեան գործին սակաւ, մինչև իսկ ըստրոլին անձանօթ մարդն անգամ կարող է գործադրել. միքանի տեսակները նոյն իսկ հնարաւորութիւն են ապիս միաժամանակ և կարճ միջոցով մեծ թուով հետազօտութիւններ կատարել: Այդ տեսակները կամ եղանակները կարելի է երկու կարգի բաժանել. առաջին զէպըում կաթից ճարպը բաժանուում է՝ վերան քիմիական նիւթեր աւելացնելով, իսկ երկրորդ զէպըում կարևոր է համարուում գործ դնել կենդանական գործութիւն: Առաջին կարգին է պատկանում Մարշանի ճարպ չափելու գործիքը (лактобутирометр), որ 30 սանտ. երկարութեամբ և 12 միլիմ. տրամագիծ ունեցող ապակեայ մի խողովակ է՝ ներքեից փակուած, իսկ վերեից բաց, որի մէջ հաւասար չափով կաթ և 900 սպիրտ կամ 630 եթեր (эфир) և մի քանի կաթիլ այրեցական կալի (жжённый кали) խառնելուց յետոյ, հարկաւոր է լաւ հարել և ապա խողովակը մտցնել 380—400 տաքացրած ջրի մէջ ու թողնել 10—15 րոպէ: Կաթի ճարպը հետզհետէ կը արձրանայ խողովակի վերեի մասերը և երբ ճարպային գնտակիները ըստրոլին դադարեն բարձրանալուց, խողովակը ջրի միջից պէտք է հանել, ուղղահայեաց բռնել և հաշուել նորա վերայ նշանակած աստիճանները՝ սկսած այն տեղից, որտեղից որ ճարպային մասը բաժանուում է եթերից կամ սպիրտից: Երկրորդ կարգին է պատկանում Գէ—Լաւալի գործիք (лактокрит): Այս գործիքի առաւելութիւնը իւր աժանութեան և պարզութեան մէջն է կայանում. միակ անյարմարութիւնն այն է, որ ամեն ժամանակ ճիշտ հետեանքների չենք կարող հասնել: Բայց երբ հարկաւոր է լինում որոշել ճարպի քանակը մօտաւորապէս, օրինակ առանձին կովերի կաթի մէջ եղած ճարպը, այդպիսի զէպըում Մարշանինը մի կանոնաւոր՝ կատարելապէս օգտակար գործիք է համարուում: Այս գործիքով շատ արագ և բաւական ճիշտ կարելի է գործ կատարել. այս պատճառով էլ գործնական տեսակէտից վերլուծութիւնը խիստ օգտակար է համարուում: Մի փոքր քանակութեամբ (10 խոր. սանտիմ.) կաթի հետ պէտք է խառնել հաւասարաչափ քանակութեամբ 50/0 ծծմբային թթւում (концентрированная серная кислота) խառն քացախային թթւում (уксусная кислота): Խառնուրդը 7—8 րոպէ պէտք է տաքացնել եռացրած ջրում և ապա մօ-

տաւորապէս 5 ընդէ ենթարկել սեպարատորի մէջ կենդ-  
րոնակոյս զօրութեան՝ ամեն մի ընդէում 6000—6600 շրջան  
անելու արագութեամբ: Խողովակի վերայ եղած բաժանմունք-  
ներից կարելի է անմիջապէս որոշել, թէ կաթի մէջ եղած ճար-  
պը հարիւրից որ մասն է կազմում, որովհետեւ երկու բաժան-  
մունքների միջև կաթից առաջացած ճարպի ծաւալը համապա-  
տասխան է կաթի մէջ եղածի  $\frac{1}{10}^0$  թէպէտ այս գործիքով  
արդիւնաւոր հեռեանքների միշտ կարելի է հասնել, բայց  
պէտք է գործադրել այն գէպքերում միայն, երբ պատրաստի  
կայ թանկագին սեպարատոր:

Այս միջոցով գտած է, որ երբ մի լիտր կաթի մէջ 12,6<sup>0</sup>/<sub>0</sub>  
գրամից աւելի ճարպ չլինի, նորա երեսին ճարպային նիւթեր  
չեն բարձրանայ, այդքանը լուծուած է մնում եթերի կամ  
սպիրտի հեղուկի մէջ: Մարշան ընդունում է, որ այս քանա-  
կութիւնն անփոփոխ է ամեն տեսակ կաթի մէջ և հեղուկի երե-  
սը բարձրացած ճարպային նիւթերից գործիքի իւրաքանչիւր  
բաժանմունքի համապատասխան մասը բաշում է 0,0233 գրամ:  
Որքան այս փորձերն աւելի խնամքով կատարուեն, այնքան աւելի  
կարելի կլինի մօտենալ ճշտութեան սահմանին:

Կաթի թթւութիւնը. նաա կարեւոր է որոշել կաթի իւրա-  
քանչիւր տեսակի վիճակը, մանաւանդ թթւութեան աստիճա-  
նը: Կթելիս որքան շատ կեղա ընկնի կաթի մէջ, որքան բարձր  
բարեխառնութեան մէջ պահուի կաթը, այնքան աւելի բարձր  
կլինի նորա թթւութեան աստիճանը և ընդհակառակը: Մի աս-  
տիճան թթւութիւնը (50 խ. ս. կաթի մէջ) համապատասխան  
է 0,0255 գր. կաթնային թթւութեան: Թարմ կաթը իւր մէջ 1—4  
աստիճան թթւութիւն է պարունակում: Կաթն եփելիս մակարդ-  
ւում է այն ժամանակ, երբ նա իւր մէջ 5,5—6,5 աստիճան  
թթւութիւն է պարունակում, որ համապատասխանում է  
0,114—0,146 գր. կաթնային թթւութեան: Կաթն ինքն իրան մա-  
կարդւում է, երբ 15—16 աստիճան թթւութիւն է ունենում,  
որ 0,337—0,360 գր. կաթնային թթւութեան է հաւասար (կամ  
երբ 100 խ. ս. կաթի մէջ 0,674—0,720 գր. կաթնային թթու է  
լինում):

Կաթի մէջ եղած թթւութիւն որոշելը շատ կարեւոր մի  
բան է կաթնատնտեսութեան մէջ. զբանով երևում է կաթի  
հետ ունեցած վարուեցողութեան եղանակը՝ սկսած կթուելուց  
և թարմ կաթի թթւութեան աստիճանի բարձրանալը, որ տե-  
ղի է ունենում միայն կթելուց մի առ ժամանակ անցնելուց  
յետոյ. այդ ժամանակն աւելի ուշ կլինի, եթէ խնամքով

վարուած լինին կթելիս և խնամքով էլ պահած կթելուց յետոյ: Սօկոլեաք մինչև թթուութեան աստիճանի նկատելի դառնալն եղած ժամանակամիջոցն անուանում է ինկուբացիօնի շրջան: Տաքացրած կաթի վերաբերմամբ այդ շրջանը տևում է 3—8 ժամ, 100 տաքութիւն ունեցող կաթինը՝ 52—75 ժամ: Խիստ մաքուր կթած կաթի վերաբերմամբ այդ ժամանակամիջոցը չորս անգամ աւելի երկար է տևում, քան անխնամ՝ անմաքուր կթած կաթինը: Որքան աւելի երկար է տևում այդ շրջանը, նշանակում է թուով նոյնքան աւելի պակաս սաղմեր են լինում կաթի մէջ, հետևապէս և նոյնքան աւելի դանդաղ է տեղի ունենում նորա բաղադրիչ մասերի մէջ փոփոխութիւնն և ընդհակառակը:

Պլաւաի ասելով այս ատակէտից որևէ կաթ հետազօտելու համար պէտք է այսպէս վարուել. նախ պէտք է որոշել փորձի ենթարկուող կաթի թթուութեան աստիճանը ինչպէս հում, նոյնպէս և եփած լիճակի մէջ. յետոյ ամանի մէջ լցրած, խցանով (ВАТНАЯ ПРОՅКА) ամուր փակած 120 խոր. սանտ. կաթը պէտք է դնել օդային բաղանիքի մէջ և ժամանակ առ ժամանակ որոշել վերցրած օրինակների մէջ թթուի քանակութիւնը. թարմ, վերին աստիճանի մաքուր պայմանների մէջ կթած կաթի թթուութիւնը հաղիւ նկատելի է դառնում միայն 5 ժամ անցնելուց յետոյ: Անխնամ կթած թարմ կաթի մէջ հինգ ժամից յետոյ արդէն նկատելի է դառնում բաւականաչափ թթուութիւն: Պատարացման և ստերչացման ենթակայ եղած կաթի վերաբերմամբ այս եղանակը չի գործադրուում: Եթէ հարկաւոր լինի ճշտութեամբ իմանալ ոչ թէ կաթի թրթուութեան աստիճանը, այլ նորա թթուած լինելը, այն ժամանակ կատարելապէս բաւական կհամարուի սպիրտով փորձելը: Եթէ հաւատար քանակութեամբ 680/0 (ըստ ծաւալի) սպիրտի հետ խառնած և 150 տաքութեան մէջ պահած կաթը չէ մակարդւում, այն ժամանակ այդ կաթը եռացնելիս ևս մի քանի ժամուայ ընթացքում չի մակարդւում: Եթէ այս փորձի ժամանակ կաթը թոյլ կերպով է մակարդւում, այն ժամանակ ևս կարելի է եռացնել, առանց երկիւղ կրելու թէ կմակարդուի:

Վատառողջ է համարւում այն կաթը, որ 9 ժամից առաջ կամ 18 ժամից յետոյ է մակարդւում: Այդպիսի կաթը չպէտք է գործ ածել ոչ խմելու և ոչ պանրագործութեան համար: Վասկածելի է համարւում այն կաթը, որ 9 ժամից յետոյ կամ դեռ 12 ժամ չանցած մակարդւում է. դորա պատճառը ոչ միայն անատունների հիւանդութիւնն է, այլև կաթի մէջ եղած ան-

մաքրութիւնները և գուցէ անասունների կերած վառ խոտը: Այս պատճառներից մէկն ու մէկը միայն բաւական է պանրագործութեանը վնաս հասցնելու: Կաթնախմորացոյցի մէջ (лактоферментаторъ) 12 ժամից յետոյ և 18 ժամից առաջ մահարգուող կաթը առողջարար է համարւում: Այն տեղերում, որտեղ կաթն այլ և այլ տեղերից են հաւաքոււմ պանիր պատրաստելու համար, աւելի նպատակայարմար է կաթնախմորացոյցի գործածութիւնը:

Նախքան որևէ կաթից պանիր պատրաստելը, ամեն ոք պարտաւոր է նախօրօք այդ կաթից մի փոքր օրինակ վերցնել փորձելու համար, թէ արդեօք ո՞րքան յարմար է նա պանրագործութեան. այդ փորձերի հետեանքը կամ արդիւնքն այն է, որ կաթի բոլոր թերութիւններն աւելի շուտ և պարզ երևան են դալիս այն ժամանակ, երբ նա պահոււմ է 40 կամ 45<sup>0</sup> բարեխառնութեան մէջ: Զալատուրնում Վալտերի կաղմած կաթնախմորացոյցը բաղկացած է թիթեղեայ մի կաթսայից, որ երկու բաժանմունքներ է ունենում. վերինը՝ փակը ջրի համար է և նոյնպէս փոքր՝ 50 և 100 խ. ս. բովանդակութեամբ, խոնրով ծածկուած ապակեայ գլանակների համար է, իսկ երկրորդը՝ բացը սպիւրտի լամպի համար է: Պլանակները և խփիկները պէտք է վերին աստիճանի մաքուր պահել, լուանալ նախ մոխրաջրով և ապա եռացրած ջրով. աւելի նպատակայարմար կլինի գլանակները ստերիլացնել: Վերին բաժանմունքը փակոււմ է խուփով և ունի ջերմաչափի համար մի անցք, որի գնտաձև մասը, որ պաշտպանուած է ծակ-ծակ թիթեղեայ պատեանով (фурлярь), խորատուղւում է ջրի մէջ: Ստերիլացրած գլանակների 2/3 մասը պէտք է լցնել կաթով և խոնոյն փակել ստերիլացրած խցաններով: Զուրը պէտք է ամբողջ ժամանակը անփոփոխ կերպով 40<sup>0</sup> տաքութիւն ունենայ: Փորձի ենթարկուող իւրաքանչիւր տեսակ կաթ պէտք է առանձին խնամքով կթած լինի: Պլանակների մէջ եղած կաթի բարձրութիւնը հաւասար պէտք է լինի կաթսայի մէջ եղած ջրի բարձրութեանը:

Առաջին անգամ գլանակները մէջ եղած կաթը գիտելու համար կաթսայի խուփը կարելի է վերցնել 6 ժամ անցնելուց յետոյ, նայն փորձը կարելի է կրկնել 9—12 ժամ անցնելուց յետոյ: Առողջ, մաքուր կթած և լաւ պահած կաթը երբէք չպէտք է 12 ժամուայ ընթացքում մահարգուի և կամ զգալի կերպով փոփոխուի: Փորձն աւելի կատարեալ և ճիշտ անելու համար կարող ենք իւրաքանչիւր տեսակ կաթից երկ-երկու գլանակ

լցնել և գիտելու ժամանակ նորանից մէկի խփիկը բանալ և այն-  
պէս տեսնել, թէ արդեօք կաթը թթուած է և այլն: Տասներկու  
ժամուայ ընթացքում կաթի թանձրութեան աստիճանը պէտք է  
մնայ այնպէս, ինչպէս սովորաբար լինում է առողջ կաթինը և  
եթէ այդքան ժամանակամիջոցում մակարդուի, շատ թանձր  
չպէտք է լինի, չպէտք է պղպձակներ ունենայ և ոչ էլ քուլայ  
քուլայ թելածն ձգուած լինի և այլն: Միայն պէտք է իմանալ  
որ այսպիսի փորձեր կարելի է կատարել թարմ և ոչ թէ մե-  
օրուայ կթած կաթի հետ:

#### Գ. Ղազարեան.

